

զիւ թափ կամ այլ գործիքի նուագակցութեամբ պիտի երգեն այժմ իսկ հին ժամանակ այդ պիտի չլինէր: «Բամբիւն» բառը որի վարիաններն են «փանդիւն» «բանդիւն» թորենացաւ մէջ սակայն ոչ թէ «վէպի» հետ է գրած այլ մի տեղ «ցցոց և պարուց» երգերի հետ (Ա. զ.): որ հայոց վիպասանքի հետ կապ չունին. երկրորդ անգամ յիշում է թէ Տիգրանի մասին «բամբուամբ» երգում էին (Ա. իզ.): իսկ երրորդ անգամ յիշում է թէ Վահագնի մասին առասպելը բամբուամբ երգում էին (Ա. լա.): իսկ միւս առասպելների բամբուամբ երգուելու մասին և ոչ մի խօսք: Այստեղից եզրակացնել թէ թորենացին ասում է թէ հայոց «նուագաւոր վէպ» է եղել Հոյկի Տիգրանի Արաշէօի և ուրիշների մասին իմա հայոց բոլոր առասպելները միասին առած (!): Բայց նախ քան այդ պէտք էր ցոյց տալ թէ հայոց բոլոր առասպելները երգուել են այն էլ բամբուան նուագակցութեամբ և ոչ թէ պատմուել թէ անոնք մի կապակցեալ ամբողջութիւն են կազմել, — այն որ թորենացին ոչ մի տեղ չէ ասած:

Արժէք չունի և պ. թալաթեանի ասածը, թէ թորենացին մասնաւորում է «երգք վիպասանաց» և իբրեւ «տեքնիկական տերմին» է գործածում, քանի որ այդ մասին ևս ոչ մի հիմունք չէ բերուած:

Սակայն եթէ այդ բառը հայոց մէջ նոյն իսկ իբրեւ տեքնիկական տերմին լինէր, այդ դեռ ևս արգելք չէր կարող լինել որ հայ թարգմանիչներն օտար ազգերի նման երգերը հայոց երգերին յատուկ անուններով կոչէին: Բաւական է միայն ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս հայ թարգմանիչները օտար աստուածութիւններն ու հսկաներն Աստուածաշնչի մէջ Հայկի Վահագն, Անգեղ և Էն հայ աստուածների կամ հսկաների համարատաւիտան են դնում: Այդպէս կարող էր և Եփրեմ խորին Ասորեոյ դրօշակի մի թարգմանիչ հայոց «վիպասան» բառով կոչել ուրիշ ազգերի երգերը:

(Ե. Կ. Կ. Կ. Կ.)

Մ. Արեղեան



ՀԱՅԵՐԸ

ՄԱՐԴԱՐԱՆԵԿԱՆ և ԱԶԽԱՐՀԱԳՐԱՆԵՆ
ՏԵՍԱԿԷՏԻՑ.

Երկայ 1898 թ. աշնանը Դր. Զանշեանցը այս ընծայեց երկրորդ հրատարակութեամբ *Братская Помощь* (Եղբայրական Օգնութիւն) ասուար գիրքը՝ քարեփոխուած եւ միջացրած ակամաւոր ոռոս ուսումնականների պէսպէս նմոյացի, նոր յօդուածներով: Մի կողմ թողնելով յարգելի հրատարակչի մարդասիրական սուրբ նպատակը, այսինքն է՝ զրբի վաճառումից զոյացած արդիւնքը գործ դնել յօդուած ծածկաւ — Հայոց որբերի, * պ. Զանշեանցի գիրքը մի ուրիշ լաւ կողմ եւս ունի. այդ ոչ թէ à tout prix նպատաստը կարծիք տարածելն է Հայերի մասին ոռոս հատարակութեան մէջ, այլ անաշատ եւ մըշմարիտ տեղեկութիւններով, փոքր ի շատեւ, ուղղել սխալը, հերքել անօգնական Հայերի վրայ քարոզած շինծու առասպելները, որոնք զարմանալի յամառութեամբ տարածուելով նաեւ ոռոս հատարակութեան լաւագոյն խաւերի մէջ, յարատեւում են մինչեւ մեր օրերը: Մենք տրամադիր ենք կարծելու, թէ հրատարակիչը այս կողմիցն էլ մասամբ հասնելու է նպատակին: Բայց չափաւ է մարգարէանալ. ժամանակն ինքը ցոյց կը տայ: Դառնանք զրբին, որի հրատարակութիւնն ըստ արժանւոյն գնահատուեցաւ թէ ոռոս եւ թէ Հայոց մամուլի կողմից: Ինչպէս ընթերցողը կարող է տեսնել երկրորդ հրատարակութեան յառաջարանից: Մենք այսչափ միայն կարող ենք ասել, որ յիշեալ պատկանելի ժողովածուի մէջ, ի թիւս զանազան զանձների, կան նաեւ այնպիսի ընտիր եւ զուտ ուսումնական հետազօտութիւններ, որոնց հայերէն թարգմանութիւնը ոչ միայն ընթերցող հատարակութեան համար առատ նիւթ կը մատակարարէր, այլ եւ զուցէ ուսումնասիրութեան առարկայ դառնար, մաս-

* Տիգրանակերտի վիլայէթի Բալու քաղաքում արգէն հաստատուած է մի որբանոց 25 մանուկների համար յանուն Եղբայրական Օգնութեան (անս. Русскія Вѣдомости № 242. 1898 թ.).

նաւանդ ուսանող սերունդին: Այդպիսի հետա-
գոտութիւնների շարքին է պատկանում: Ի
միջի այլոց, Ս. Պետերբուրգի գիտութեանց
ծննդարանի անդամ՝ պրոֆ. Դ. Ն. Անուշինի
գրուածքը, որի խորագիրը զարդարում է մեր
այս երկտող յառաջաբանի սկզբը: Այդ գը-
րուածքի հայերէն թարգմանութեանը մենք
ծննդամուխ եղանք այն պատճառով, որ դա
ընդգրկում է գիտութեան այնպիսի մի ճիւղը,
որի մասին շատ քիչ քան կը գտնուի մեր
մասնով գրականութեան մէջ: Եթէ չստանը
աւելի: Մի խօսք էլ թարգմանութեանս մա-
սին. վերջինս, զուցէ, տեղ տեղ կաղում է
ուսումնական անհրաժեշտ տերմինների քա-
ցակայութեան շնորհիւ մեր լեզուով: Բայց ...
quod potui — feci.

Մ. ՀՈՎՐԵԱՆ.

Հայերը իւրեանց ֆիզիքական տիպարով
կազմում են բաւականին առանձնացած մար-
դարանական մի խումբ, որ որոշուում է ոչ
միայն Եւրոպական Ռուսիայի Արեւմտեան
Եւրոպայի ազգութիւնների միջից, այլ և մա-
սամբ աւելի հարաւարեակ ազգերից՝ Կովկա-
սու Պարսկաստանի Փոքր Ասիոյ և Միջեր-
կրական ծովի ծովափերեայ բնակիչներից: Ինքն
ըստ ընքեան հասկանալի է, որ այս տիպարի
առանձնայատկութիւնները ոչ միշտ արտայայ-
տւում են հաւասար պարզութեամբ: Հայերի
մէջ կարելի է հանդիպել անհատների, որոնք
աւելի նման են ուրիշ տիպարների ներկայա-
ցուցիչներին, և, ընդհակառակն, օտար ազ-
գութիւնների մէջ, որոնք իւրեանց բնակա-
թեան տեղովը Հայերի գրայիք են, պատա-
հում են ոչ պակաս Հայերին նման անձինք,
որոնք, սակայն, Հայոց ազգութեան չեն պա-
կանում: Տոհմական սահմանները, ինչպէս
յայտնի է, տարբերւում են ցեղերի և ազ-
գերի սահմաններից. Հայերի կազմութեան
մէջ, իբրեւ ազգի, որ խօսում է Հայոց լե-
զուով և սեպհականել է իրան այդ ազգի կա-
ցութեան յատուկ բնորոշ գծերը, կարող են
լինել ծագումով Հայերին ոչ ազգական ան-
հատների սերունդներ, միւս կողմից, յայտնի

է, որ Հայոց ազգի զոյւթեան զանազան մա-
մանակամիջոցներում, նորա բաղմամբ, ան-
գամները, և մինչև անգամ նշանուոր խմբեր
խլում էին ժողովրդի միջից, գերի էին տալի-
ւում, տարադրում էին հայրենիքից հեռու,
բռնի թէ կամաւ կրօնափոխ էին լինում: Եւ-
թարեւում էին օտարազգի հարեանների կու-
տուրական ազգեցութեան, ընդլայնում էին
նոցա լեզուին, սովորութիւններին և վերջ ի
վերջոյ իսպառ կորչում էին հարազատ ցեղի
համար: Բայց դորանից, կարելի է ենթադր' չ,
որ տակաւին հնազոյն ժամանակներում երբ
կատարւում էր Հայոց ազգայնութեան կազ-
մակերպութիւնը, զորա մէջ չմտան միւսնոյն
տոհմական տիպարին պատկանեալ համայն սե-
հատները, և նոցա մի մասն, որ ապրւում էր
նոյն ցեղի գրաւած երկրի յետին ծայրում
կարող էր ենթարկուել օտար կուտուրական
ազգեցութեան, ընդունել ուրիշ ազգադրա-
կան առանձնայատկութիւններ (ի թիւս որոց
և օտար լեզուն) և այդ մասի սերունդները
կարող են յարատեւել մինչև այժմ էլ Փոքր
Ասիոյ Ատրեսոյ Կովկասու քրիստոնեայ և
մահմադական բնակիչների մէջ, ևս և Ասորի-
ների, Յոյների, Տաթարների, Լեզգիների և այլ
ազգութիւնների մէջ, որոնք օտար են Հայե-
րին իւրեանց լեզուով, հաւատքով, պատմու-
թեամբ և նիստուկացով: Խօսելով ցեղի տի-
պարի մասին, մենք ինկատի ունինք նորա
ընդհանրութեան գերակշռող տիպարն և ընդ
ամին սոյն ցեղի համար աւելի բնորոշ տի-
պարը, քան թէ ուրիշ զրաջի ազգերի հա-
մար, որոնց մէջ դա նոյնպէս փոքր ի շատէ
տարածուած կարող է լինել:

Մի որոշ ցեղի տիպարն ըստ կարելւոյն
չափ հանգամանօրէն պարզելու համար, ան-
հրաժեշտ է քայլ առ քայլ զիտել և այդ
ցեղին պատկանեալ բաղմամբ, անհատների
չափերն առնել: Օտարազգի գիտնականներից
այդպիսի հետազոտութիւններ Հայերի վրայ
կատարել է Ծանար, որ ճանապարհորդելով
Կովկասում 1881 թ.ին՝ 25 մարտու չափերն է
առել Թիֆլիզում և Երևանում: Իսկ հե-
տեւեալ ուղևորութեան միջոցին 1890 թ. ին՝
249 անհատների (14 զանազան տեղերում),
ի թիւս որոց 39 կանանց (չափել է տիկին

Ծանար):¹ Ռուսաց հետազոտողներից Հայերի մասին մարդաբանական տեղեկություններ հաւաքել են՝ դեն. Լերկերայ րժ. Պանտիխով, Բլիւմ, Տփարեանովիչ: Առաջին երկը (որպէս և Ծանարը) տեղեկություններ էին հաւաքում Կովկասեան զանազան ազգութիւնների և այս թուում նաև Հայերի մասին, ընդ սմին՝ Լերկերային հետաքրքրում էին զլսի չափերը (այդ նպատակաւ իւրաքանչիւր ազգութիւնից նա առել է մի քանի տասնեակ անհատների չափերը): Իսկ միւս զիտնականները—բացի զորանից—չափել են մարմնի հասակը, կուրճը, երեսը, զննել են մազերի և աչքերի դոյնը, Պանտիխովը իւր տեղեկությունները ժողովել է զինուորադրութեան միջոցին և Հայերի վերաբերութեամբ կարողացել է օգտուել 2300 անհատների վրայ կատարուած չափերից (տե՛ս Извѣстія Кавк. Отд. Географ. Общ. Д-ръ Пантиуховъ; Антропол. наблюдёнія на Кавказѣ, 1892 г.): Վերջապէս րժ. Տփարեանովիչ 1896 թ. հետազոտեց (պրօֆ. Տարնեցկու ձեռով) 105 զինուոր և զիւրացիների Բորչալուի և Թիֆլիզի զաւառներում (տե՛ս. Матеріалы къ антропологии Армянъ. Диссертан. С. Петербургъ, 1897 г.): Ի նկատի առնելով այս բոլոր հետազոտութիւնների արգասիքը, կարելի է հետեւեալ կերպով բնորոշել Հայոց (արական սեռի) տիպարը Ռուսաց Անդրկովկասու սահմաններում:

Հայերը—միջին հասակի ազգ են, տեղ տեղ էլ մինչև անգամ միջին հասակից բարձր. բայց առհասարակ, Կովկասու միւս ազգութիւնների հետ համեմատելով, աւելի ցածր են միջինից. ըստ Ծանարի, նորա չափած աղամարդոց միջին հասակը հաւասար է 167 սանտիմետրի. նոյն թուահամարը ստացաւ նաև Տփարեանովիչը, նկատելով, սակայն, որ Հայերի հասակի (մեծութիւնը) բարձրութիւնը ներկայացնում է շատ նշանաւոր տատանումներ՝ 153-ից մինչև 174 սանտիմետր: Ընդ սմին այդ

բարձրութիւնները մի շարքում դասաւորելով և նշանակելով անհատների թուահամարները, որ ընկնում են յետագայ թուերի խմբին (զօր. 1638—1665 միլլիմետր, 1665—1692 և այլն) կարելի է համոզուիլ, որ անհատների այդ թուերը համախմբուած են ոչ թէ միայն միջին հասակի վերաբերութեամբ, այլ դէպի երկու աւելի ցածր և աւելի բարձր հասակներն, որ, կարծես, ակնարկում է երկու հասակով տարբեր ցեղերի խառնուրդի վրայ: * Պանտիխով, համեմատելով զինուորութեան կոչուած Հայերի հասակը Անդրկովկասու զանազան քաղաքներում, գտաւ, որ Ծուշի, Բագու, Թիֆլիզ և Քութայիս քաղաքների բնակիչների հասակը առաւել բարձր է զիւրացիների հասակից. այսպէս, օրինակի համար, քաղաքներում զինուորութեան կոչուածների միջին հասակը հաւասար դուրս եկաւ. այն է 167—165 սանտիմետր, մինչդեռ զաւառներում միայն 165—162 սանտ. էր, և այդ թուում ամենափոքր միջին հասակի մարդիկն էին Նախճաւանի և Չանկիազուրի զաւառներից (1616—1629 միլլմետր), իսկ ամենաբարձրը Գանձակի և Թիֆլիզի զաւառներից (1645—1652 միլլմետր): Մարմնոյ միջին ծանրութիւնը, րժ. Տփարեանովիչ (75 անձինք չափելով) գտել է, հաւասար 168 ֆունտին (67,2 քիլոգրամ): Հարկ է նկատել, որ չափուածների մեծագոյն մասն երիտասարդներ են եղել, որոնք տակաւին չէին հասել կատարեալ հասակի և ծանրութեան (ինչպէս ապացուցուած է կրկին հետազոտութիւններով, կատարուած մի քանի տասնեակ զինուորների վրայ 1—2 տարուայ ծառայութիւնից յետոյ): Կրճքի շրջաչափը զարգացած է բաւարար կերպով, մանաւանդ զիւրական բնակիչների (կէս հասակից աւելի, միջին թուով 40—32 միլլմետր), այն ինչ քաղաքի բնակիչներինը աւելի պակաս է (Թիֆլիզում և Բագուում—կէս հասակից աւելի, միջին թուով, միայն 12—10 միլլմետր): Տփարեանովիչի չափելովը Հայերի երանը համեմա-

¹ E. Chantre: „Recherches anthropologiques dans le Caucase“. T. IV. 1887, p. 262 ss; idem—Aperçu sur l'anthropométrie des peuples de la Transcaucasie; idem—Rapport sur une mission scientifique en Arménie russe, որոնք մասամբ թարգմանուեցան և լոյս տեսան Բազմազգ Տանգիսում 1893—1894 թ. և ընդ:

* Պրօֆ. Բ. Պատկանեան էլ կարծում էր, թէ հայկական ազգը բաղկացած պիտի լինի Արմէններից և Հայերից Гаи и Армяне.

տարար երկայն չէ, թիկունքը և կոնքը լայն են, ոտները բաւականին երկայն, ոլորի նշանաւոր երկարութեան պատճառով, թէև (Պանտիւսովի չափերով) աւելի կարճ է քան վրացիներինը՝ զարշապարը մեծ չէ, ձեռքերը բաւականին երկայն են (ըստ Պանտիւսովի աւելի երկայն քան թէ վրացիներինը) և նոցա (ձեռքերի) ընդարձակ ձգանքը երեք սանտիմետրով գերազանցում է հասակի մեծութեան: Գլուխը չափաւոր մեծութեամբ է. միջին մեծութիւնը գլխի հորիզոնական շրջաչափի՝ ըստ Տփլիսի միջին հասարակ է 574 միլիմետրին, իսկ Պանտիւսովի չափերովը զանազան գաւառներում 547—549 միլ., որ համարեա թէ համապատասխանում է վրաց միջին չափին (547 միլ.) և փոքր ինչ պակաս է Օսերի, Կարադաղիների և Սփանեանների և այլն միջին չափից (554—572 մ.): այդ հանգամանքը բացատրւում է յիշեալ ազգութիւնների բարձր հասակով: Գլխի ձեւը—կարճ ու լայն է, չափաւոր ձիգ և նշանաւոր ընդմիջող տրամագծով, ուստի տոկոսաւոր յարաբերութիւնը գլխի մեծագոյն լայնութեան դէպի մեծագոյն երկայնութիւնը, կամ այսպէս ասած՝ գլխի որոշիչը Հայերի մօտ արտայայտւում է խոշոր թուանշանով, այսինքն թէ Հայերը պատկանում են կարճազուլ տիպարին: Տփլիսի միջինը գտաւ, որ այդ որոշիչը հասարակ է 86⁹/₁₀, Էրզրում—85⁶/₁₀, Ծանաղը—85³/₁₀, Պանտիւսովի—85⁷/₁₀ (Թիֆլիզիների) և 86⁹/₁₀ (ուրիշների): այս թուերը ցոյց են տալիս թէ Հայերը վերադասւում են ծայրագոյն բաւականօրէն (կարճազուլ տիպարի) շարքին:

(Նարոնախէլի)

Լ Ե Ջ Ո Ւ Ի

Մ Ի Հ Ը Մ Ե Ս Տ Դ Ը Ս.

Անցեալ տարուայ «Մուրճ»-ի Հոկտեմբեր-Նոյեմբեր համարի մէջ պ. Վանցեանցը ցոյց է տալիս հայոց լեզուի մի թերութիւն և իսկոյն դարմանում է նոյնը: Սա իրաւամբ հիացած է, որ օտար լեզուները իզական գերանուններ ունին (она, sie, elle), և ամի-

ստում է, որ հայերէնը այդպիսի շնորհքից զուրկ է: Եւ որովհետեւ այս հանգամանքը օտար լեզուների ճոխութիւն է կազմում, իսկ հայերէնի—աղքատութիւն, ուստի մեր պարոնը աշխատում է զանեւ դարմանը և . . . գտնում է: Սա շատ սրամիտ նկատողութիւն է անում, թէ օտար լեզուներում իզական գերանունները աւելի երկար են, քան արականները:

արաբ. онъ, ея, il,

իգալ. она, sie, elle.

Յետոյ աւելացնում է, թէ որովհետեւ հայերէնը շատ քիչ կարճ և երկար գերանուններ է գործածում, առանց անոնց մէջ խորութիւն գնելու, ուստի մեծ խոհմանութիւն կը լինի մեր կողմից, որ կարճը յատկացնենք արականին և երկարը՝ իգականին, որով հայերէն լեզուն խիստ կը ճոխանայ: Այսպէս մենք ունինք անխորարար գործածած.

կարճ. նրա, նրանից, նրանով.

եղիւր. նորա, նորանից, նորանով:

Ինչո՞ւ ուրեմն այսուհետեւ կարճը արականի զօրութիւն չունենայ, իսկ երկարը— իգականի: Եւ տեսէք, թէ ինչ գեղեցիկ բան դուրս կուգայ: Եթէ ունենանք այսպիսի նախադասութիւն. «Ներայրն ու քոյրը անտառից դուրս եկան, եւ հաւանեցի նորա, կամ եւ հաւանեցի նրա» — և եթէ երկար ու կարճ գերանունները անխորարար գործածենք, ինչպէս որ հայերէնի մէջ սովորութիւն է դարձել, ո՞վ պէտք է հասկանայ թէ ինչ է նշանակում «նոր» կամ «նրա» գերանունը, արդեօք՝ եղբայր թէ քոյր: Բայց եթէ պ. Վանցեանցի նոր մեթոդով կարճը արական ճանաչուի, իսկ երկարը՝ իգական, այն ժամանակ անշուշտ նախադասութիւնը կը լուսարանուի և մենք անշփոթ կիմանանք իւրաքանչիւր գերանունով միայն իրա համապատասխան անունը, ուրեմն «եւ հաւանեցի նրա» կը նշանակէ թէ հաւանեցի Էղբայր, իսկ «եւ հաւանեցի նորա» — կը նշանակէ թէ հաւանեցի Կոյրը:—Այս է պ. Վանցեանցի դարմանը:

Մեր պատասխանը հետեւեալն է լեզուն կենդանի կազմուածք է, լեզուին բնականօրէն պատուէրներ տալ չի կարելի:—Այսքանը հե-